

ՔԵԹՐԻՆ ՄԱՔԱՌԻԵՅ, «ԴԻՄՈՒՄ՝ ԱՆԳԼԻԱՅԻ, ՇՈՏԼԱՆԴԻԱՅԻ ԵՎ
ԻՌԼԱՆԴԻԱՅԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԻՍ ԿԱՐԱՐ ՀԱՐՑԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ»*

Եյա Դիաստան

Բանալի բարեր՝ գաղութային քաղաքականություն, հանրապետություն, դեմոկրատական համակարգ, ազատություն, սահմանադրություն:

18-րդ դարում Մեծ Բրիտանիան սկսում է զարգանալ աննախընթաց կերպով, որը պայմանավորված էր մի շարք գործոններով:

Երկրի զարգացման համար հատկապես հատկանշական էին արդյունաբերական հեղաշրջան ազդեցությունը, առևտությունը և գաղութների ավելացումը:

Արդեն 1756թ-ին Անգլիան ներքաշվում է յոթնամյա պատերազմի մեջ: Պատերազմի արդյունքում նրանց հաջողվում է գրավել մի շարք ֆրանսիական գաղութներ: Գաղութների նվազումը մեծ նշանակություն է ունենում Մեծ Բրիտանիայի առևտություն և տնտեսության զարգացման համար: Սակայն միևնույն ժամանակ Երկիրը պատերազմի մեջ է ներքաշվում ամերիկյան իր գաղութների հետ:

Տվյալ ժամանակաշրջանում բեկումնային իրողություն էր Անգլիայում լուսավորական գաղափարների սաղմնավորումը, որով հիմք է դրվում լուսավորության դարաշրջանը: Այն համարվում է Եվրոպայի պատմության առանցքային փուլերից մեկը, որը կապված էր գիտական, փիլիսոփայական և հանրային մտածողության վերելքի հետ:

Անգլիայի պատմության այս շրջադարձային ժամանակահատվածում պատմության թատերաբննում իր գործունեությամբ մեծ ներդրում է ունենում Քերին Մաքառվեյը:

Անգլիական և ամերիկյան պատմագրության ներկայացուցիչները կատարել են նշանակալից քայլեր Մաքառվեյի կյանքի և ստեղծագործական ժառանգության ուսումնասիրության ճանապարհին: Ս. Ա. Բարգը բնութագրել է հեղինակին որպես անգլիական պատմագրության ակնառու ներկայացուցիչ՝ նշելով վերջինիս անալիտիկ, վերլուծական միտքը և աչքի ընկնող գրականագիտական շնորհը [1]:

Քերին Մաքառվեյը դարձել է Անգլիայի պատմության առաջին հետազոտողներից մեկը, ով ուսումնասիրել է Մեծ Բրիտանիայի պատմությունը արմատական-ժողովրդական տեսանկյունից: Նրա «Դիմում Անգլիայի, Շոտլանդիայի և Իռլանդիայի ժողովուրդների ներկայիս կարևոր հարցերի վերաբերյալ» աշխատությունը գրված է հանրապետականների դիրքից, որը բնորոշ չէր տվյալ ժամանակահատվածի պատմագրության ներկայացուցիչների համար:

Դիտարկելով այս աշխատությունում Մաքառվեյի հայացքները՝ Ն. Ա. Կրելենկոյին նշում է, որ Մաքառվեյը պատկանում էր այն փոքր խմբին, որը ներկայացնում էր «ձևավորության արդյունաբերական հասարակական դասի» շահերը և նրա աշխատությունը արտացոլում է արտահայտված դեմոկրատական գաղափարներ [2]:

Անգլիայի պատմությանը նվիրված իր «Դիմում՝ Անգլիայի, Շոտլանդիայի և Իռլանդիայի ժողովուրդների ներկայիս կարևոր հարցերի վերաբերյալ» գրքում Մաքառվեյը ներկայացնում է Անգլիայի կառավարման ձևի և կայսրության գաղութային քաղաքականության մասին: Նա անդրադարձում է երկու կարևորագույն հիմնահարցի՝ տալով միա-

* Հոդվածն ընդունվել է 05.02.2017:

Հոդվածը տպագրության է երաշխավորել պ.գ.դ., պրոֆեսոր Ա. Ստեփանյանը:

ՄԵՐՈՐԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

ժամանակ նաև համոզիչ պատասխան հոդվածում ներկայացվող դրանց վերաբերյալ ենթահիմնահարցերին: Առաջին հիմնահարցը, որին անդրադառնում է հեղինակը, վերաբերում է կայսրության կառավարման ծկին: Այս հիմնահարցի շրջանակներում հեղինակը ներկայացնում է կամքի ազատության ու պետական գործիքների գործունեությանը վերաբերող ենթահիմնահարցը, որը կապված է իր հայրենակիցների կամային հատկանիշների դրամումների հետ: Երկրորդ հիմնահարցը կապված է կայսրության գաղութային քաղաքականության հետ: Տվյալ հիմնահարցի հետ աղերսվող ենթահիմնահարցում հեղինակն անդրադարձել է գաղութների բնակչիների հիմնարար իրավունքներին:

Հեղինակն իր «Դիմում Անգլիայի, Շոտլանդիայի և Իռլանդիայի ժողովուրդների ներկային կարևոր հարցերի վերաբերյալ» աշխատությունում առաջին հիմնահարցը ներկայացնելիս միաժամանակ խոսում է պետության կառավարման մի քանի տեսակների մասին, մասնավորապես անդրադառնում է ժողովրդավարությանը, հանրապետությանը, միավետությանը և դրանց տարատեսակներին՝ ներկայացնելով նաև իր նախընտրած կառավարման մողելը՝ կառավարման հանրապետական ծկը: Նրա արտահայտած գաղափարներից կարելի է եզրահանգել, որ նա ներկային տերմիններով արտահայտված լիբերալ-դեմոկրատիա հայեցակարգը պատկերացնում է ժամանակակից ընկալումներով:

Առաջին հիմնահարցը ներկայացնելիս քերին Մաքառվեյը իր աշխատանքում մեջբերումներ է կատարել՝ Պոլիիրիոսի աշխատություններում ներկայացված կառավարման քաղաքական համակարգերի տարատեսակներից՝ միաժամանակ վերլուծելով դրանք, քանի որ իր աշխատության մեջ նշում է, որ այս հեղինակի քաղաքական համակարգերի վերաբերյալ Պոլիիրիոսի ներկայացրած նկարագրությունները և բացատրությունները ամենաճգրիտներից է համարում և փաստերով ապացուցում է, որ դրանք ամենամոտն են իր ժամանակաշրջանի քաղաքական համակարգերին: Քերին Մաքառվեյը Պոլիիրիոսի նման նշում է, որ որոշ հեղինակների կողմից կառավարման երեք հասարակ տեսակների՝ թագավորական իշխանության, արիստոկրատիայի և ժողովրդավարության առանձնացումը չի համապատասխանում իրականությանը, քանի որ այս ծերի կողքին գոյություն ունեն երեք այլ ծեր, որոնք միաժամանակ և՝ տարբերվում են, և՝ նման են դրանց[3]:

Կարծում ենք՝ Մաքառվեյն այս համակարգերը ներկայացնելիս կրել է նաև իր ժամանակաշրջանի ազդեցությունը, քանի որ մինչև իր նախընտրած կառավարման համակարգին անդրադառնալը, նկարագրում է Եվլուպական այլ երկրների քաղաքական մոդելները և հետո միայն, հաշվի առնելով Անգլիայի յուրահատկությունները, ապացուցում է կառավարման հանրապետական մողելի առավելությունները: Հետաքրքրական է, որ նա դեմոկրատիան ներկայացնում է որպես մեծամասնության կարծիքի գերակայություն:

Հետաքրքրական է այն փաստը, որ, ճիշտ է, Մաքառվեյը չի արտահայտել որոշակի շեշտված կարծիք պետական կառավարման վեց ծերի հաջորդականության մասին, սակայն իր աշխատանքում ներկայացնում է դրանք:

Ուսումնասիրելով աշխատանքը՝ ես կարող եմ եզրակացնել, որ նա այստեղ ամբողջությամբ համակարծիք է Պոլիիրիոսի հետ: Չնայած նա ոչ մի բացահայտ դիրքորոշում չի ներկայացնում, սակայն իր նկարագրություններն ինձ հնարավորություն են տալիս հիմնավորելու, որ կառավարման առանձին ծերի ներքին զարգացումն անցնում է հիմք էտապներ՝ ծնունդ [քրաքանակություն] գաղափարություն [անդամակից պատճենագործություն] և գաղափարություն [անդամակից պատճենագործություն]:

Հեղինակը ներկայացնում է պետական կառավարման խառը տիպի վերլուծությունը, այսինքն՝ ծեր, որտեղ միացվում են լավագույն պետական ծերի առավելությունները, այսինքն՝ ծեր, որտեղ միացվում են լավագույն պետական ծերի առավելությունները:

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

որ և որտեղ, շնորհիվ փոխադարձ վերահսկողության, ոչ մեկը չի գարգանում մյուսներից առավել: Այս իրողությունը հետաքրքրական փաստ է, քանի որ Լուսավորության դարաշրջանի մի շարք հեղինակներ հանգում են այս տեսակետին, սակայն ի հակադրություն քչերի, Մաքառվեյր քաջատեղյակ էր, որ այս վերլուծությունը, անտիկ ժամանակաշրջանի ընդհանուր քաղաքական տեսության մի մասն է[5]:

Հեղինակն իր աշխատությունում պետության կառավարման ծերին հակիրճ անդրադարձնալուց հետո առաջին հիմնահարցում ոչ բացահայտ ծևով նշում է, որ նա կառավարման հանրապետական մողելի կողմնակից է: Զնայած Քերին Մաքառվեյր բացահայտորեն չի անդրադարձել ազատության բնույթին մինչև իր կյանքի վերջը, այնուամենայնիվ, իր աշխատանքը ցայտուն կերպով ցուցադրում է հանրապետական ազատության առավելությունները[6]:

Իր աշխատանքում նա ցայտուն կերպով արտահայտում է իր հակումը ժողովրդավարության նկատմամբ: Նա կարծում է, որ հանրապետական կառավարման ծևի տարրեր մողելներից, որոնք կիրառվել են մարդկության պատմության ընթացքում, միայն յավ բալանսավորված դեմոկրատական համակարգն է, որը կարող է ապահովել հասարակության ազատությունը և ուրախությունը: Այս աշխատանքում օգտագործված «յավ բալանսավորված դեմոկրատական համակարգ» արտահայտություննից ես ենթադրել եմ, որ նա «արիստոկրատական հանրապետության» կողմնակից է [7]:

Պետական կառավարման հանրապետական համակարգին անդրադարձնալիս Քերին Մաքառվեյր իր գաղափարները խարսխում է Լուսավորության դարաշրջանի ռահվիրաներից մեկի Զոն Լոկի պետության մասին արտահայտած գաղափարների վրա: Որպես ազատական գաղափարական հոսանքի ներկայացուցիչ հեղինակը համակարգիր է Լոկի հետ, որ պետությունը ստեղծված է բնական իրավունքի և օրենքների երաշխավորմամբ (կյանք, ազատություն, սեփականություն)[8]:

Հեղինակը գտնում է, որ բնական վիճակը լինակատար ազատության և հավասարության վիճակն է սեփականության և կյանքի տնօրինման հետ մեկտեղ: Մաքառվեյր իր աշխատանքում ներկայացված կառավարման ծևի հենասյուներից մեկը համարում է ազատության իրավունքը, որը մերժում է անձնական կախվածության ցանկացած հանգամանք: Հետևաբար աշխատանքում բերված բոլոր օրինակները հանգեցնում են քաղաքական ստրկության մերժմանը[9]: Ներկայացված բոլոր փաստերը մեզ թույլ են տալիս եզրահանգել, որ ճիշտ է Մաքառվեյր բացահայտ չի արտահայտել իր հանրապետական կառավարման մողելին կողմնակի լինելու փաստը, սակայն նա այս կառավարման համակարգի ջատագով է:

Մեր կարծիքը գալիս է հիմնավորելու այն փաստը, որ, համաձայն Քերին Մաքառվեյրի, ստրկական կախվածությունը և անհավասարությունը այն գործոններից են, որոնք խեղում են ժողովրդի ամրողականությանը միտված հավաքականության գաղափարը՝ մղելով վերջինիս գործել ընդդեմ հավերժական բարոյական ծշմարտությունների[10]:

Պետական կառավարման կարևորագույն հիմնահարցի հետ է աղերսվում կամքի ազատությամ ու պետական գործիքների գործումներության ենթակիննահարցը, որը կապված է իր հայրենակիցների կամային հատկանիշների դրսևորումների հետ: Նա իր աշխատությունում անդրադարձել է այս խնդրին՝ ցանկանալով շեշտադրել, որ հանրապետական-դեմոկրատական ամուր կառավարման համակարգ ունենալու համար իր հայրենակիցները պետք է ունենան կամային ազատություն և արդար պետական գործիքներ: Հաշվի առնելով սա նրա ուսումնասիրությունները հետագոտողներից մեկը՝ Մարտինա Ռեուտերը, գտնում է, որ՝ Քերին Մաքառվեյր առաջարկում է ռացիոնալ

ՄԵՄՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

համապատասխանության[11] տարբերակը, այնինչ մյուսները ենթադրում են, որ նա համոզված է ետքաջնահատ կամ ժամանակակից Կալվինիստ է[12]:

Նա քննադատում է այն պետական գործիքների գործունեությունը, ովքեր իրենց քայլերով նպաստում են երկրի տարբեր ղորշուների քայլքայմանը: Հեղինակն իր աշխատանքում նրանց նկարագրում է հետևյալ կերպ: «Այս մարդիկ փորձում են համոզել ձեզ, որ նրանք, ովքեր համրեն են զայիս որպես իրենց երկրի անվտանգության համար ամենաշատը մտահոգվողները, ամենաքիչն են հետաքրքրված վերջինիս բարօրությամբ: Նա պնդում է, որ, օրինակ, այս մարդիկ ժողովրդին ասում են, որ Կամադային վերաբերող փաստաթուղթը երաշխավորում է բնակչների իրավունքները, և որ այս նահանգի բնակչների արտոնությունները շնորհված են բրիտանական թագի կողմից»[13]: Նրանք ներկայացնում են, որ մարդկանց անսահմանավակ ենթարկվածությունը սահմանված է պետության կողմից պաշտպանության ընդունման անհրաժեշտությունից: Նա իր կարծիքը իմանավորում է հետևյալ կերպ: «Վեճի էության վերաբերյալ ձեր զաղափարները խառնելու և մարդկային զգացմունքները ձեր մեջ ճնշելու համար, նրանք ասում են ձեզ, որ օրինակ ամերիկացիները չնայած հարկվել են համապատասխան կամ անհամապատասխան ծնող, ձեզ նման հայտնվում են նոյն տիհած, անախորժ դրության մեջ»[14]:

Անփոփելով հեղինակի այս հիմնահարցի և ենթահիմնահարցի վերաբերյալ իր աշխատությունում արտահայտած տեսակետները, կարծում ենք, որ նա հանրապետական մողելի կողմնակից է, միաժամանակ, մեծապես ազդված լինելով Լուսավորության դարաշրջանի զաղափարախոսներից կարևորում է ազմիվ պետական գործիքների դերակատարությունը, ինչպես նաև իր հայրենակիցների՝ որպես քաղաքացիների կամային հասկանիշների դրսողումները՝ խրախուսելով վերջիններին պայքարել իրենք իրավունքների համար:

Հաջորդ հիմնահարցը, որին անդրադարձել է հեղինակը, աղերսվում է կայսրության զաղության քաղաքականությանը: Հեղինակը հանրեն է զայիս ազատական շարժման զաղափարներով, որոնք նա կայսրության զաղության քաղաքականության մեջ մեծապես հակադրում է պահպանողական թիվ զաղության քաղաքականության վերաբերյալ սկզբունքներին: Տվյալ հիմնահարցի հետ աղերսվող ենթահիմնահարցում հեղինակն անդրադարձել է զաղությաների բնակչների հիմնարար իրավունքներին:

Որպես ազատականության (լիբերալիզմ) քաղաքական փիլիսոփայության ներկայացուցիչ՝ նրա աշխարհայացքը հիմնված է ազատության ու հավասարության զաղափարների վրա: Հետաքրքրական է այն փաստը, թե ինչպես է Մաքառվելը իր աշխատությունում ներկայացնում կայսրության զաղության քաղաքականությանը վերաբերող զաղափարները: Նա ընտրել է հետևյալ մողելիը: Նա ներկայացնում է պահպանողական զաղափարական հոսանքի հենասյուներից մեկի՝ Բյորկի[15] զաղափարները այս հիմնահարցի վերաբերյալ, այնուհետև նույն հիմնահարցի շորջ կատարում է իր վերլուծությունը և հակադրում մեկը մյուսին՝ վերջում ապացուցելով կայսրության զարգացման համար հանրապետական-դեմոկրատական կառավարման մողելի հետ կապված զաղության քաղաքականության առավելությունները:

Ճիշտ է հեղինակը ներկայացրել է Բյորկի տեսակետները իր զաղափարներին մոտ դիտանկյունից, սակայն ավելի խոր ուսումնասիրության դեպքում կարելի է եզրահանգել, որ նա իրականում հանդես է զայիս դրանց դեմ և իր աշխատանքում դրանք ներկայացնում է ոչ թե հիմնավորելու, այլ հակադրելու իր զաղության զաղափարներին և ապացուցելու իր զաղափարների ճշմարտացիությունը: Բյորկը, ի տարբերություն Մաքառվելի, միապետության զատագով է և միաժամանակ կայսրության զաղու-

ՄԵՐՐՈԴ ՄԱՇՏՈՏ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

թային քաղաքականության հարցում արդարացնում է իշխող գահակալների իրականացրած միջոցառումները:

Սաբաուլեյի իր աշխատությունում ներկայացնում է Բյորկի՝ որպես պահպանողական թեկանությունը՝ շեշտադրելով այն իրողությունը, որ անկախության համար ամերիկյան պատերազմի դրդապատճառները հիմնավորապես հակուտնյա են իր գաղափարներին: <Ետաքրքրական է այն փաստը, որ Սաբաուլեյը ընտրել է մի քանի հեղինակների և իր աշխատությունում մեծապես կիրառում է նրանց տեսակետները: Սա իհարկե ունի իր պատճառը: Նա ընտրել է աշխատանքային այս մեթոդը, քանի որ բացահայտորեն չի ներկայացրել իր տեսակետներին այս հիմնահարցերի և դրանց ենթահիմնահարցերի վերաբերյալ և համեմատությունների կամ վերջիններիս կարծիքները ներկայացնելու միջոցով հիմնավորել է իր տեսակետները: Սաբաուլեյը մեջքերում է Բյորկի կարծիքը ամերիկյան գաղութների հետ անզիական կառավարության կոնֆլիկտի վերաբերյալ՝ նշելով, որ անկախության համար Ամերիկյան գաղութների հետ կոնֆլիկտի ամենակարևոր պատճառներից մեկը անզիական կառավարության հովանավորչական միջոցառումներն են առևտորի ոլորտում: Բյորկը հատկապես կտրուկ քննադասում էր «արիենստական առևտորի» այս քաղաքանությունը, որը կարգավորվում էր ոչ թե առաջարկի և պահանջարկի գործընթացով, այլ պետական հարկադրանքի միջոցներով[16]:

Նա իր աշխատությունում նշում է, որ Բյորկն ընդունում էր մարդկային մտքի միջոցով Աստվածային օրենքի ընկալման հիմնական դրույթների հնարավորությունը, սակայն դրա հետ մեկտեղ նկատի ուներ ոչ թե առանձին անհատի գիտակցությունը, այլ ազգի կողեւութիվ գիտակցությունն ընդհանուր առնամբ, որը կարող է սերունդ առ սերունդ կուտակել Աստվածային հիմաստության կարևորագույն գիտելիքը[17]: Հեղինակը, մեր կարծիքով, ներկայացնում է իր և պահպանողական ուղղության այս մտածողի գաղութային քաղաքականության վերաբերյալ առևտորային և համամարդկային բնական օրենքի գաղափարների տարբերությունները՝ ցանկանալով դրանց միջոցով ներկայացնել պետության կառավարման հանրապետական ծկի և դրա հետ ածանցող գաղութային քաղաքականության առավելությունները:

Երկու հեղինակների իրարամերժ տեսակետները արտահայտվում են նաև հետևյալում: Իր գրքում հեղինակը ներկայացնում է, որ, ի տարբերություն իրեն, Բյորկը մերժում էր Լուսավորության դարաշրջանում մեծ տարածում ունեցող հասարակական դաշինքի տեսությունը, համաձայն որի հասարակությունը և պետությունը առաջացել են առանձին անհատների գիտակցված որոշման հետևանքով[18]:

Դիտարկելով յուրաքանչյուր պետություն որպես ստեղծագործական ջանքերի արդյունք և վերջինի բոլոր սերունդների քաղաքացիների ժառանգական սեփականություն՝ Բյորկը, ի տարբերություն Սաբաուլեյի, հատկապես մեծ նշանակություն էր տալիս ժառանգականության սկզբունքին քաղաքականության և իրավունքի մեջ: Միապետական գաղափարների և այս համակարգի գաղութային քաղաքականության սխալականության ապացուցման համար Սաբաուլեյը մեջքերում է Բյորկի հետևյալ կարծիքը. «Հոգ չի տանի իր սերնդի մասին այն ժողովուրդը, որը հայացք չի նետում նախնիների վրա... Ընորդիվ սահմանադրական քաղաքականության մենք ստանում, պահպանում և փոխանցում ենք մեր սեփականությունը և կյանքը մեր սերունդներիմ[19]: Քաղաքական ինստիտուտները և սեփականությունը տրվում և վերցվում են մեզանից նույն ձանապարհով»[20]:

Վերը պետք է նշեն Սաբաուլեյի «Դիմում՝ Անզիայի, Շուլանդիայի և Իուլանդիայի ժողովուրդների ներկայիս կարևոր հարցերի վերաբերյալ» գիրքը պարզորդ նկատվում է, որ ըստ նրա, ազատ մարդիկ պետք է կառավարվեն ոչ թե կամայական այլ

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՒՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

մարդու կությունից բխող օրենքներով, որը համապատասխանում է իրականությանը և հնարավոր է ընկալել պատճառահետևանքային կապի միջոցով[21]: Այս աշխատության մեջ նա բացատրում է, թե ինչպես պետք է գաղութների բնակիչները պահպանեն իրենց ազատությունը՝ ընդդեմ Սույուարտների արքայատոհմի հավակնությունների և կամայական իշխանության հարկադրանքի:

Հեղինակը կիրառում է այն սկզբունքը, որ իրավունքները, եթե դրամբ ընդիանութեաւս գոյություն ունեն, տիեզերական են և զարմանալի չեն, որ նա փորձում է ցույց տալ իր հայրենակիցներին գաղութների հարկման անարդարացիությունը՝ գուգահեռաբար շեշտելով, որ դրանց իրավունքը չի տրվում ներկայացուցիչ ունենալ բրիտանական պատլամենտում: Նա բացատրում է իր հայրենակիցներին, թե ինչպիսի կորուստ կիրարի, եթե նրանք գրկվեն ամերիկյան գաղութների հետ առևտրական բոլոր արտոնություններից: Բայց իր հիմնական բոլորն ուղղված է ոչ թե իր հայրենակիցների անձնական շահերի ու նկրտումների դեմ, ովքեր կարծում են, որ իրենց սեփական հարկման բեռը թերևանում է այն ամերիկացիների վրա ավելի շատ դժեռով, այլ այն սկզբունքն է առաջադրում, որ, ուրիշների իրավունքները պաշտպանելով, որևէ մեկը կարող է երկարատև ժամանակահատվածի համար ապահովել իր սեփական իրավունքները: Նա շեշտում է, որ կամայական հարկման ձեզ (ըստ stamp act-[22]) դիմադրության չհանդիպեց իր հայրենակիցների կողմից՝ բացառությամբ նրանց ովքեր մասնավորապես մտահոգված են Մեծ Բրիտանիայի և իր գաղութների միջև առևտրական փոխահավետ համագործակցության ընդհատմամբ: Պառամենանտի գործունեությունը առևտրի ու լրտուում ցայտուն կերպով ներկայացվում է վերջինիս կողմից ընդունված երկու այլ փաստաթղթերով, մասնավորապես Բոստոն նավահանգստի վերաբերյալ փաստաթղթով[23]: Մեկ այլ փաստաթղթում նշվում է, որ նրանք գրկված են Ասամբեա և Երովյալ ատենակալների դատարան ունենալու իրավունքից և տարածան այլ օրենքներ, որոնց կիրարկմամբ Քվերեկը ավելի վատ վիճակում է հայտնվում, քան այն նախկինում էր՝ Ֆրանսիայի տիրապետության տակ:

Սաքառվեյի և Բյորկի տարբեր քաղաքական հայացքները դրսնորվում են նաև հետևյալում: Մաքառվեյը բացահայտորեն կոչ է անուն բրիտանացիներին, մասնավորապես գաղութների բնակիչներին, պայքարել իրենց հիմնարար իրավունքների համար՝ հակադրվելով միապետական նկրտումներին:

Մեկնարանելով գաղութային քաղաքականության առանձնահատկությունները՝ Քեթրին Մաքառվեյը իր աշխատանքում նշում է գաղութների հետ Մեծ Բրիտանիայի համագործակցության արդյունավետության կարևորագույն հիմնահարցը:

Հեղինակը Բրիտանիայի գաղութային քաղաքականությունը ներկայացնում է հետևյալ ձևով. «Քվերեկ նահանգի համար փաստաթղթի յուրաքանչյուր տողում մենք նկատում ենք քննապետության տարրեր: Համաձայն 1763թ. թագավորական հօչակագրի՝ կանադացիները բրիտանական թագի բոլոր արտոնություններից և իրավունքներից օգտվելու փոխարեն գրկված են խոճի ազատությունից և ենթարկվում են թագավորին և քաղաքացիական և հոգևոր տիրություններում և համեմատաբար ավելի վատ վիճակում են, քան երբ գտնվում էին Ֆրանսիայի տիրապետության տակ»[24]:

Իր աշխատության մեջ Քեթրին Մաքառվեյը ցույց է տալիս, որ բրիտանական կառավարությունն այն կարծիքին է, որ գաղութների հարկման և վերջիններիս բնակիչներին ստրկական կախվածության մեջ զցելու ամենաարդյունավետ եղանակը նրանց առևտրային կապերով պարտավորեցնելը է:

Հեղինակը շեշտում է, որ բրիտանական կայսրությունն իր գաղութների հետ վերաբերվում է ավելի վատ, քան նվաճված երկրների: Ո՞չ Ուելսը և ո՞չ էլ հոլանդիան չեն

ՄԵՄՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

հարկվում այնպես, ինչպես գաղութները և ներկայացուցիչներ են ուղարկում բրիտանական պաղամենտ՝ ի տարբերություն վերջիններին[25]:

Իր աշխատանքում հեղինակը կատարում է հետևյալ մեջբերումը. «Մինչև պաղամենտում ներկայացուցիչներ չունեցող ամերիկյան գաղութներին հարկելը կարաՎարությունը պետք է նվազեցնի չափից ավելի բարձր աշխատավարձերը, իշեցնի անհամաշափ արտոնությունները, վերացնի ապօրինի նպաստերը, նախընտրական բարդարշավին հատկացվող ծախսերը, պաղամենտում ծայների համար հատկացվող կաշառքները և այլն: Այս միջոցառումներով գահակալը տաս անգամ ավելի շատ եկամուտ կունենա, քան հարկումից և անարդարացի գործողություններից գաղութների նկատմամբ»[26]:

Նա այն կարծիքին է, որ, եթե բրիտանական գաղութները քաղաքացիական պատերազմ սկսեն կայսրության դեմ, Բրիտանիան կվործանի և իրեն, և՝ Ամերիկյան իր գաղութներին, իր հերթին ամերիկյան իր գաղութները դանդաղորեն ծեռք կրերեն անկախություն: Սա կհանգեցնի նրան, որ բրիտանական հսկայածավալ կայսրությունը կզրկվի այն բոլոր արտոնություններից և առավելություններից, որոնք գալիս էին գաղութներից: Այս դեպքում երկիրը կպարփակվի իր սահմանների մեջ և անսահման իշխանությամբ օժնված բռնապետի տիրակալությամբ նույնիսկ կկանգնի եվրոպական հզոր այլ երկրի ենթակայության տակ ընկնելու վտանգի առջև[27]:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Барг М. А., Образ Великой французской революции в современной ей английской радикальной публицистике (защита революции историком Кэтрин Маколей) // От Просвещения к революции: из истории общественной мысли нового времени. М., 1990. стр. 85-86
2. Креленко Н. С., Кэтрин Маколей - леди Фукидид XVIII века // Историографический сборник. Межвузовский сборник научных трудов. Вып. 17. Изд-во Саратовского университета, 1998. стр. 82
3. Clarke, Randolph, 2000, “Incompatibilist [Nondeterministic] Theories of Free Will”, The Stanford Encyclopedia of Philosophy (Fall 2000 Edition), Edward N. Zalta [ed.], p. 75
4. Pocock, J. G. A. 1998. “Catherine Macaulay: patriot historian.” In Women writers and the early modern British political tradition, edited by H. Smith. Cambridge: Cambridge University Press, p. 13
5. Мирзаев С. Б., Полибий. [Серия «Из истории политической и правовой мысли»]. М., Юрид. лит, 1986, Самохина Г. С. Полибий: эпоха, судьба, труд. СПб., Изд-во СПбГУ, 1995, Фриц К. фон. Теория смешанной конституции в античности: критический анализ политических взглядов Полибия, Издательство СПбГУ, 2007, стр. 63
6. Skinner, Quentin, 1998, Liberty before Liberalism, Cambridge: Cambridge University Press, p. 71
7. T. P. Peardon, The Transition in Historical Writing (1933), p. 66
8. Ashcraft, Richard, 1986. Revolutionary Politics & Locke's Two Treatises of Government. Princeton: Princeton University Press. Discusses the relationship between Locke's philosophy and his political activities, p. 29
9. Locke, John, 1689, Two Treatises of Government, 2nd edition, Cambridge: Cambridge University Press, 1967.
10. Skinner, Quentin, 1998. Liberty before Liberalism, Cambridge: Cambridge University Press, p. 23

ՄԵՐՐՈԴ ՄԱՀԾՆԵՑ ՀԱՍԱԼԱՄԱՐՄԻ ԽՈՏՏՈՒ 2017

11. Ապակողմնորոշիչ կիհնի հատկորոշել ազատ կամքի հստակ սահմանումն այս գաղափարին նվիրված փիլիսոփայական աշխատանքներում, քանի որ սրա վերաբերյալ կան տարբեր գաղափարներ: Հիմնականում փիլիսոփաները գտնում են, որ մարդկանց անիրաժեշտ է բարոյական առումով պատասխանու լինել իրենց վարքի համար (O'Connor, Timothy, 2002. "Free Will", The Stanford Encyclopedia of Philosophy [Spring 2002 Edition], Edward N. Zalta [ed.]):
12. Reuter, Martina. 2007. "Catharine Macaulay and Mary Wollstonecraft on the Will", In Virtue, Liberty and Toleration, Political Ideas of European Women 1400–1800, edited by J. Broad and K. Green. Dordrecht: Springer, p. 64
13. Macaulay, Catharine, 1783. *A Treatise on the Immutability of Moral Truth*, London: A. Hamilton, p. 25; Hill, Bridget, 1992, The Republican Virago: The Life and Times of Catharine Macaulay, Historian. Oxford: Clarendon Press, p. 57
14. Macaulay, Catharine, 1778. *History of England from the Revolution to the Present Time in a Series of Letters to a Friend*, Bath: R. Cruttwell, p. 10; Macaulay, Catharine, 1775. *Address to the People of England, Scotland, and Ireland on the Present Important Crisis of Affairs*. London: Dilly, p. 29, p. 14
15. Չյունով Ա.Բ. Размышления англичан о Французской революции: Э. Бёрк, Дж. Макинтош, У. Годвин. М.: Памятники исторической мысли, 1996, стр. 26
16. Robert Eccleshall, English Conservatism since the Restoration [London: Unwin Hyman, 1990], p. 18
17. Cone, Carl B. Burke and the Nature of Politics (2 vols, 1957, 1964), a detailed modern biography of Burke; somewhat uncritical and sometimes superficial regarding politics, p. 39
18. Lock, F. P. Edmund Burke. Volume I: 1730–1784 (Clarendon Press, 1999), p. 28
19. Burke, Edmund, The Writings and Speeches of Edmund Burke [9 vol 1981–] vol 1; vol 2; vol 6 India: The Launching of the Hastings Impeachment, 1786–1788], p. 35
20. Burke, Edmund, The Writings and Speeches of Edmund Burke [9 vol 1981–] vol 1; vol 2; vol 6 India: The Launching of the Hastings Impeachment, 1786–1788, p. 49
21. Macaulay, Catharine, 1775. *Address to the People of England, Scotland, and Ireland on the Present Important Crisis of Affairs*. London: Dilly, p. 19
22. Բրիտանական պառլամենտի կողմից 1765թ. ընդունված փաստաթուղթ: [Morgan, Edmund S. and Morgan, Helen M. The Stamp Act Crisis: Prologue to Revolution. (1963), "The Stamp Act of 1765 – A Serendipitous Find" by Hermann Ivester in the Revenue Journal, the Revenue Society, Vol. XX, No.3, December 2009, pp. 87–89.]
23. Բրիտանական պառլամենտի կողմից 1774թ. ընդունված առևտրային փաստաթուղթ, որը օրենք դարձավ 1774թ. մարտի 31-ին, որի հիմնական նպատակն էր ապահովել Մեծ Բրիտանիայի իրավասությունները ամերիկյան իր դոմինիոնների նկատմամբ: [Frothingham, Rise of the Republic [Boston, 1872]; Halsey, Boston Port Bill (New York, 1904):
24. http://www.specific-claims-law.com/index.php?option=com_content&view=article&id=12%3Aroyal-proclamation-1763&catid=5&Itemid=8
25. Hay, Carla H. 1994, "Catharine Macaulay and the American Revolution." The Historian, 56(2), p. 16
26. Macaulay, Catharine, 1775. *Address to the People of England, Scotland, and Ireland on the Present Important Crisis of Affairs*. London: Dilly, p. 21
27. Ibid., p. 28

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Քեթրին Մաքաուլեյ. «Ղիմում Անգլիայի, Շոտլանդիայի և Իռլանդիայի
ժողովուրդների ներկայիս կարևոր հարցերի վերաբերյալ»
Ելյա Ղիասյան

Իր «Ղիմում Անգլիայի, Շոտլանդիայի և Իռլանդիայի ժողովուրդների ներկայիս կարևոր հարցերի վերաբերյալ» գրքում Քեթրին Մաքաուլեյը ներկայացրել է կայսրության կառավարման ձևի և գաղութային քաղաքականության բացահայտման վերաբերյալ վերլուծությունները:

Հեղինակը մեկնաբանել է Բրիտանական կայսրության գաղութային քաղաքականությունը: Միաժամանակ նա փորձում է բացատրել իր համարապահներին, որ այս տիպի կառավարությունը կարող է բազմաթիվ բացասական հետևանքներ ունենալ ամբողջ կայսրության համար:

SUMMARY

Catharine Macaulay, *Address to the People of England, Scotland, and Ireland on the Present Important Crisis of Affairs*
Elya Ghiasyan

Keywords: Colonial politics, Republic, Democratic System, Freedom, Constitution

In her book «Address to the People of England, Scotland, and Ireland on the Present Important Crisis of Affairs» Catharine Macaulay submitted the analyses of the form of the government and revealed the colonial politics of the empire.

The author demonstrated the colonial politics of the British Empire. Simultaneously, she was trying to explain to her citizens that this particular kind of government can have many negative consequences for the whole Empire.

РЕЗЮМЕ

Катарина Маколей, «Обращение к народу Англии, Шотландии и Ирландии о нынешнем кризисе важных дел»(1775)
Эля Гиасян

Ключевые слова: колониальная политика, республика, демократическая система, свобода, конституция

В своей книге «Обращение к народу Англии, Шотландии и Ирландии о нынешнем кризисе важных дел» Катарина Макаулей показывает анализы, касающиеся формы правления в Британии и колониальную политику правящего класса.

Автор показывает колониальную политику Британской империи. В то же время она пытается объяснить своим согражданам, что этот тип госуправления может иметь ряд негативных последствий для всей империи.